ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 24.11.2025 թ. կայացած ընլայնված նիստի թիվ 3 արձանագրություն

Օրակարգ

1.Հանդիպում ԵՊՀ ռեկտոր Հ.Հովհաննիսյանի, ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտոր Է.Ասրիյանի, գիտական քարտուղար Մ. Հովհաննիսյանի հետ:

2. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի թիվ 3 նիստին 36 անդամներից ներկա էին 27-ը: Նիստի շրջանակում քննարկվեցին Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենքին վերաբերող փոփոխությունները, կարգերն և կարգավորումները: Շեշտադրվեց կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացի անհրաժեշտությունը կրթության որակի բարելավման նկատառումով: Կարևորվեց նաև ենթակառուցվածքների տեխնիկական վերազինման հարցը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համատեքստում:

2024-2025 ուսումնական տարում ֆակուլտետի կրթագիտական գործունեության ամփոփ նկարագրի շրջանակում կարևորվեցին նաև հետագա անելիքները ուսանողակենտրոն կրթության ապահովման տեսանկյունից:

Նշվեց, որ մեծ հաշվետու ուսումնական տարում կարևորագույն ձեռքբերում Translation Studies: Theory and Practice ամսագրի ներառումը Scopus գիտատեղեկատվական շտեմարանում: Այս դիտանկյունից ռեկտորը հավելեց, որ աշխատակիցները շուրջ 700 գիտական հոդված են հրապարակել միջազգային ամսագրերում: Ընդլայնվել են նաև միջազգային շաժունության ծրագրերը, որոնք ուսանողներին հնարավորություն են ընձեռում ուսումնառել արտասահմանյան հեղինակավոր կրթական հաստատություններում:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և

գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

24.11.2025 թ.